

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության**

17.07.2019թ.

**ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

- Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ  
Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Ա.Դեմիրճյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Ա.Գասպարյանը, Ն.Համբարձումյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք  
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական  
Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական  
Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

**Օր ա կ ա ր գ ու մ՝**

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Գ. Մարկոսյան, ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց**

**1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

ա) Անհրաժեշտ ուշադրություն դարձնել տրված հանձնարարականների կատարման համար սահմանված կարգի պահպանմանը և թույլ չտալ ժամկետների և կարգի խախտումներ:

բ) 1-օրյա ժամկետում ներկայացնել վերջին 1 ամսվա ընթացքում ստորաբաժանումների աշխատակիցների կողմից իրականացված գործուղումների վերաբերյալ հաշվետվություն:

**2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝**

Կազմակերպել քննարկում սեփական եկամուտների մինչև 60 տոկոս հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարներին հետ, պարզաբանել, որ համայնքներում իրականացվող սուբվենցիոն և այլ ծրագրեր կիրականացվեն միայն բավարար եկամուտների հավաքագրման պայմաններում, տրամադրել 10-օրյա ժամկետ և կատարված փոփոխությունների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝**

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և հսկողություն սահմանել առողջապահական համակարգի աշխատողների աշխատանքային պայմանների և վերաբերմունքի (այդ թվում նաև շտապ օգնության ծառայության) բարելավման ուղղությամբ:

**4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Զանազյանին՝**

Շրջաբերականով դիմել համայնքների ղեկավարներին, որպեսզի շինարարական աշխատանքներ իրականացնելուց առաջ դրանց վերաբերյալ քննարկումներ կազմակերպեն և նախագծա-նախահաշվային փաստաթղթերը համապատասխանեցնեն գործող օրենսդրության պահանջներին:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝**

2-օրյա ժամկետում հրավիրել խորհրդակցություն մարզի խոշորացվող համայնքների ղեկավարների մասնակցությամբ և անհրաժեշտ քննարկումներ կազմակերպել:

**6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝**

2- օրյա ժամկետում միջոցներ ձեռնարկել մարզպետարանի կայքէջի թարմացման և անհրաժեշտ տեղեկատվության տեղադրման ուղղությամբ:

 Invalid signature

X 

ԱՄՔԱՆԻՄԱՆԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ